Գենդերային հիմքով խտրականության և ապատեղեկատվության դեմ պայքարը և խոսքի ազատության սահմանները

ՀՀ օրենսդրական կարգավորումների համապատասխանությունը միջազգային իրավական կարգավորումներին

Վերլուծությունն իրականացվել է ՕքսԵՁեն հիմնադրամի կողմից «Արտեմիս» դաշինք ծրագրի կողմից ֆինանսավորվող «Պայքար գենդերային ապատեղեկատվության դեմ. վերափոխելով պատմությը 2.0» ծրագրի շրջանակում:

Զեկույցը հեղինակել է.

Անահիտ Չիլինգարյան, մարդու իրավունքների փորձագետ

Երևան, 2024

Ներածություն....4
Միջազգային իրավունքի շրջանակ....7
Խոսքի ազատությունը....9
Հավասարության իրավունքը....10
Խոսքի ազատության սահմանափակումը....12
Լրատվական դաշտի կարգավորումների միջազգային փորձի հակիրճ ուսումնասիրություն....15
Ներպետական օրենսդրություն....19
Խոսքի ազատությունը....19
Հավասարության իրավունքը ՀՀ օրենսդրության շրջանակներում....20
Խոսքի իրավունքի սահմանափակումները....22
Զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրություն....24
Տեսալսողական մեդիա....24
Հանրային հեռարձակողներ....26
Լրատվական դաշտի ինքնակարգավորման համակարգը....27
Առցանց միջավայրի կարգավորումները....33
Վերլուծություն և ամփոփում....37
Առաջարկություններ....40

Ներածություն

Խոսքի ազատությունն իբրև մարդու հիմնարար իրավունք պաշտպանված է միջազգային իրավունքի փաստաթղթերով, ինչպես նաև Հայաստանի բարձրագույն իրավական ակտով՝ Սահմանադրությամբ և օրենքներով։ Այն անկյունաքարային նշանակություն ունի անձի ինքնության և մարդկային բազմազանության արտահայտման, անհավասարությունների հաղթահարման, գաղափարների ազատ տարածման և մարդու մյուս իրավունքների իրացման համար։

Միևնույն ժամանակ, խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և դրա չարաշահումը կարող է ունենալ բոլորովին հակառակ ազդեցություն, վնասելով անձանց ինքնության դրսևորմանը, նպաստելով խտրականության տարածմանը և խոչընդոտելով այլ իրավունքների իրացմանն ու պաշտպանությանը՝ հանգելով ընդհուպ բռնության վատագույն ձևերի։

Ապատեղեկատվությունը, խտրական խոսքն ու ատելության խոսքը տարեցտարի զարգացնում են իրենց բովանդակությունն ու ձեռք բերում տարածման նոր հնարավորություններ ներառյալ համացանցի միջոցով։ Իսկ սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքն ու վնասակար ու խտրականություն տարածող ապատեղեկատվությունը Հայաստանում ևս դարձել է ինչպես առանձին խմբերի շահերի սպասարկման, այնպես էլ հայրիշխանական հասարակության միջավայրում խտրական գործելակերպերի խթանման և արդարացման միջոց։

Սույն հետազոտությամբ կքննարկվեն սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականություն հրահրող ու կարծրատիպերը ամրապնդող խոսքի և վտանգավոր ապատեղեկատվության տարածման խնդիրների՝ ՀՀ օրենսդրության կարգավորումները միջազգային իրավունքի չափորոշիչների համապատասխանության լույսի ներքո։

Մեթոդաբանություն

Հետազոտության նպատակն է եղել վերլուծել, թե որքանով են սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականություն հրահրող ու կարծրատիպեր ամրապնդող խոսքի և վտանգավոր ապատեղեկատվության վերաբերյալ ՀՀ օրենսդրական կարգավորումները համապատասխանում այդ հիմքերով

խտրականության դեմ պայքարի և խոսքի ազատության համատեքստում միջազգային իրավական կարգավորումներին և իրավունքի զարգացման միտումներին։

Այս նպատակին հասնելու համար խնդիր է սահմանվել.

1. Վերհանել խոսքի ազատության համատեքստում գենդերային ինքնության հիմքով ապատեղեկատվության և խտրականության արգելքը կարգավորող ՀՀ ներպետական իրավական դրույթները։
2. Վերհանել միջազգային չափորոշիչները, որոնք վերաբերելի են խոսքի ազատության սահմաններին և գենդերային ինքնության հիմքով ապատեղեկատվության և խտրականության կանխարգելմանը։
3. Ձևավորել վերլուծական շրջանակ, որի միջոցով կիրականացվի ներպետական օրենսդրության կարգավորումների համեմատությունը միջազգային չափորոշիչներին։
4. Գնահատել ներպետական իրավական կարգավորումների համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին, անհրաժեշտության դեպքում մշակել օրենսդրության բարելավման առաջարկություններ։

Արդյունքում, ուսումնասիրվել են Միացյալ ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, Եվրոպական միության և մի շարք երկրների փորձը խոսքի ազատության պաշտպանության և խտրականության դեմ պայքարի ոլորտում։
Վեր են հանվել ՀՀ օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև փափուկ իրավունքի[1] կարգավորումները։ Ուսումնասիրվել են նաև առանձին մասնավոր կազմակերպությունների ինքնակարգավորման մեխանիզմները։ Ուսումնասիրվել են իրավիճակի վերաբերյալ զեկույցներ, փորձագիտական հարցազրույցներ են իրականացվել մեդիա փորձագետ Սառա Խոջոյանի, հիբրիդային վտանգների հարցերով փորձագետ Սամվել Մարտիրոսյանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի media.am կայքի խմբագիր Գեղամ Վարդանյանի, մեդիափորձագետ Արթուր Պապյանի հետ։ Ուղարկվել են տեղեկատվության ստացման հարցումներ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով, Հանրային հեռուստաընկերություն։

Ներպետական կարգավորումները գնահատվել են միջազգային կարգավորումների և փորձագետների գնահատականների լույսի ներքո։ Հաշվի է առնվել նաև առանձին երկրների փորձը։

[1] «Փափուկ իրավունք» են համարվում այն փաստաթղթերը, սկզբունքները և հռչակագրերը, որոնք իրավաբանորեն պարտադիր բնույթ չեն կրում ի հակառակ կոշտ իրավունքի նորմերի: Փափուկ իրավունքի գործիքները գերակշռում են միջազգային ասպարեզում: Փափուկ իրավունքի դրույթներ են, օրինակ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը:

Գնահատումն իրականացվել է հիմնական 2 ուղղություններով՝

- Խոսքի ազատության պաշտպանության և խոսքի ազատության սահմանափակման իրավակարգավորումները, ներառյալ.
  - Առցանց և անցանց մամուլի ազատության, և խոսքի ազատության սահմանափակման կարգավորումները.
  - Համացանցում խոսքի ազատության կարգավորումները.
- Հավասարության իրավունքի և խտրականությունից զերծ մնալու իրավունքի կարգավորումները, մասնավորապես.
  - Սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունից զերծ մնալու իրավունքի օրենսդրական կարգավորումները:

Ուսումնասիրությունն իրականացվել է խոսքի ազատության իրացման երկու հարթությունների համատեքստում՝ անհատների կողմից իրացման և լրատվական միջոցների ազատության շրջանակում:

Վերլուծության հիման վրա մշակվել են առաջարկություններ ըստ երկու խմբերի՝ օրենսդրական փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ և գործնական բնույթի փոփոխությունների վերաբերյալ:

Ուսումասիրությունն անդրադառնում է միայն խտրականություն հրահրող ու կարծրատիպերն ամրապնդող (այսուհետ՝ խտրական խոսք) և վտանգավոր ապատեղեկատվություն տարածող խոսքի կարգավորումներին: Խոսքի նշված տեսակները հաճախ կարող են հատվել իրենց բովանդակությամբ, սակայն կարող են տարբերվել իրենց ազդեցությամբ, կիրառման նպատակներով և դիտավորությամբ: Սույն հետազոտության շրջանակներում ապատեղեկատվությունը (disinformation)[2] դիտարկվել է որպես կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության միտումնավոր տարածում, որի նպատակը հաճախ արժանահավատությունը խաթարելն է, վնասակար կարծրատիպերը ամրապնդելը, բռնություն հրահրելն է: Եվ այն սովորաբար օգտագործվում է հանրային ընկալումները շահարկելու և գենդերային կողմնակալությունն ամրապնդելու համար: Գենդերային խտրականությունը դիտարկվել է որպես ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն,որի արդյունքում անձը կամ անձանց խումբը հայտնվում է նույն իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատ նվազ բարենպաստ վիճակում կամ որն անհամաչափորեն անբարենպաստ է անդրադառնում անձանց խմբի նկատմամբ: Այն միշտ չէ, որ պարունակում է միտում:

[2] What is Gendered Disinformation? M. G. Sessa https://il.boell.org/en/2022/01/26/what-gendered-disinformation

Կարևոր ենք համարում նշել, որ հետազոտությունը չի ներառում ատելության խոսքի սրության աստիճանի հասնող ոչ իրավաչափ խոսքի կարգավորումների հիմնախնդիրները: Այդ հարցերը խորքային կերպով ուսումնասիրված են[3]:
Այնուամենայնիվ, մենք որոշ չափով անդրադարձել ենք սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի կարգավորումներին, հաշվի առնելով, որ մի կողմից իրավական կարգավորումները դեռևս չունեն բավարար հստակություն ատելության, սեքսիստական, խտրական կարծրատիպային խոսքի սահմանումների վերաբերյալ, իսկ խոսքի վնասակարության աստիճանի գնահատումն առավելապես կախված է համատեքստից, միտումից, հնարավոր հետևանքներից, և մյուս կողմից՝ ատելության խոսքի կարգավորումները որոշ դեպքերում խաչվում են և կարող են նույնականացվել կամ զուգահեռվել այլ տեսակի վնասակար խոսքի կարգավորումների հետ:

Միջազգային իրավունքի շրջանակ

Խոսքի ազատության սահմանների և սեռի, սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքով խտրական, ապատեղեկատվություն տարածող ու ատելության խոսքի դեմ պայքարի բալանսավորման խնդիրը տարիներ շարունակ գտնվում է մարդու իրավունքների միջազգային համակարգերի օրակարգում և անհատ հետազոտողների ուշադրության ներքո:

2022 թ.-ին անդրադառնալով սեռի և գենդերային ինքնության հիմքով բռնության խնդրին՝ Խոսքի ազատության և գենդերային արդարության վերաբերյալ համատեղ հռչակագրի հեղինակներն[4] արձանագրել են, որ առկա համակարգային խոչընդոտները, այդ թվում՝ սեռական և գենդերային բռնությունը, միզոգինիան, արմատացած կանխակալությունները, սոցիալական նախապաշարմունքները, հայրիշխանական կառուցակարգերը և մշակութային ու կրոնական նորմերի մեկնաբանությունները, ինչպես նաև, խտրական օրենքները, քաղաքականությունները և գործելակերպը խոչընդոտում են կանանց արտահայտման ազատությունից հավասար օգտվելուն: Հռչակագրով արձանագրվել է, որ սեռը և գենդերը պետք է ճանաչվեն որպես պաշտպանված հատկանիշներ ատելության քարոզչության արգելման համար, որը Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի

[3] Համեմատական ուսումնասիրություն՝ ատելության խոսքի օրենքների եւ ՀՀ օրենսդրության վերաբերյալ: Չարա Բակալիս եւ Արա Ղազարյան. 2020 թ. https://rm.coe.int/final-report-on-reforming-armenian-hate-speech-laws-arm/pdf/1680a0b84d

[4] Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, Լրատվամիջոցների ազատության ԵԱՀԿ ներկայացուցչի, Ամերիկյան պետությունների կազմակերպության արտահայտման ազատության հատուկ զեկուցողը, Մարդու և ժողովուրդների իրավունքների Աֆրիկյան հանձնաժողովի արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության հատուկ զեկուցող:

2-րդ կետի և Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում է: Իսկ միզոգինիան պետք է արգելվի, եթե այն հասնում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասի և 20-րդ հոդվածի 2-րդ մասի հոդվածներով սահմանված շեմին[5]:

Կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի խթանման և պաշտպանության ՄԱԿ-ի հատուկ զեկուցողն էլ իր 2021 թ.-ի թեմատիկ զեկույցով նշել է, որ ատելության խոսքը ներառում է ատելություն արտահայտելու լայն շրջանակ և պետության պարտավորությունները պետք է տարբերվեն կախված հնարավոր վնասի աստիճանից և բնույթից, իսկ գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքը պետք է սահմանվի այնպես, որպեսզի պաշտպանի և՛ կանանց անվտանգությունը, և՛ արտահայտման ազատությունը[6]:

Սեռի և գենդերային ինքնության հիմքով ատելության խոսքի և խտրականության խնդիրները գտնվում են նաև Եվրոպայի Խորհրդի ուշադրության ներքո: Խնդրին, մասնավորապես անդրադարձ է կատարվել Նախարարների կոմիտեի մի շարք հանձնարարականների միջոցով, ինչպիսիք են՝ Ատելության խոսքի դեմ պայքարի վերաբերյալ թիվ CM/Rec(2022)16 հանձնարարականը, Սեքսիզմի կանխարգելման և սեքսիզմի դեմ պայքարի մասին թիվ CM/Rec(2019)1 հանձնարարականը, Ատելության դեմ պայքարի թիվ 15 Ընդհանուր քաղաքականության հանձնարարականը, Գենդերային հավասարության և տեսաձայնային հատվածի վերաբերյալ թիվ CM/Rec(2017)9 հանձնարարականը, Գենդերային հավասարության և մեդիայի վերաբերյալ թիվ CM/Rec(2013)1 հանձնարարականը, Գենդերային հավասարության չափորոշիչների և մեխանիզմների վերաբերյալ թիվ CM/Rec(2007)17 հանձնարարականը և այլն:

Անդրադառնալով Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ խնդիրները արձանագրել են նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինները: Այսպես, ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն 2021 թ.-ին, ի թիվս այլի, արձանագրել է, որ Հայաստանի կառավարությունը պետք է բարձրացնի հասարակության իրազեկվածությունը կանանց և տղամարդկանց միջև հավասարության սկզբունքի և գենդերային կարծրատիպերի վերացման անհրաժեշտության մասին, և ապահովի, որ լրատվամիջոցները նպաստեն կանանց՝ որպես հասարակական և

[5] Joint declaration on Freedom of Expression and Justice. The United Nations (UN) Special Rapporteur on the Promotion and Protection of the Right to Freedom of Opinion and Expression, the Organization for Security and Co-operation in Europe (OSCE) Representative on Freedom of the Media, the Organization of American States (OAS) Special Rapporteur on Freedom of Expression and the African Commission on Human and Peoples' Rights (ACHPR) Special Rapporteur on Freedom of Expression and Access to Information. 2022 https://www.osce.org/files/f/documents/6/4/517266.pdf

[6] A/HRC/47/25: Disinformation and freedom of opinion and expression - Report of the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression. https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc4725-disinformation-and-freedom-opinion-and-expression-report . 2021

քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցների դրական պատկերացումներին: Կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն 2022 թ.-ին ևս անդրադարձել է ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերերի և պարտականությունների հետ կապված ատելության խոսքին, հայրիշխանական վերաբերմունքին և խտրական կարծրատիպերին, ներառյալ ուսումնական նյութերում և լրատվամիջոցներում և այս խնդիրների լուծման ուղղությամբ հանձնարարականներ ուղղել:

Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով կայացրած վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը անդրադարձել է սեռական կողմնորոշման հիմքով խտրական ու ատելության խոսքին, արձանագրել է հայաստանյան օրենսդրության ոչ բավարար կարգավորումները, ներառյալ նշելով, որ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը դեռևս ներառված չեն որպես հատկանիշ ատելության խոսքի պաշտպանության վերաբերյալ կարգավորումներում: Դատարանը, նաև կիրառել է «անպատասխանատու ձևով իրագործվող խոսքի ազատություն» եզրը, անդրադառնալով բնակչության որոշակի խմբերին վիրավորելու, ծաղրի ենթարկելու կամ զրպարտելու միջոցով կատարվող հարձակումներին:

Խոսքի ազատությունը

Խոսքի ազատությունը անձի և քաղաքացու հիմնարար ազատություններից է, որը պաշտպանված է միջազգային իրավունքի մի շարք համընդհանուր և տարածաշրջանային պարտադիր բնույթ կրող փաստաթղթերով: Այն իր ամրագրումն է ստացել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով:
Այս փաստաթղթերը յուրաքանչյուր անձի համար պաշտպանում են ցանկացած տեսակի տեղեկատվություն կամ գաղափար փնտրելու, ստանալու կամ տարածելու իրավունքը՝ անձի ընտրությամբ ցանկացած լրատվամիջոցի, ինչպես նաև՝ համացանցի և թվային տեխնոլոգիաների միջոցով:

Խոսքի ազատությունն ընկած է ժողովրդավար հանրային քաղաքականության հիմքում: Դրա իրացումն ու զարգացումը պետք է զերծ լինի գրաքննության կամ վերահսկողության ցանկացած փորձից: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դեռևս 1976 թվականին Handyside-ն ընդդեմ Միացյալ Թագավորության վճռով[7] ընդգծել է «արտահայտվելու ազատության իրավունքի» նշանակությունը և դրա դերը ժողովրդավարական հասարակությունում՝ արձանագրելով, որ «խոսքի ազատությունը

[7] Handyside v. United Kingdom, 5493/72, 1976 https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57499%22]}

այդպիսի [ժողովրդավար] հասարակության էական հիմքերից մեկն է, դրա առաջընթացի և յուրաքանչյուր անձի զարգացման հիմնական պայմաններից մեկը»: Այն կիրառելի է ոչ միայն «տեղեկատվության» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք դրական են ընդունվում կամ դիտվում են որպես վիրավորանքից զերծ կամ անտարբերության առարկա, բայց նաև այն խոսքի համար, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ բնակչության որևէ հատվածին: Այսպիսին են բազմակարծության, հանդուրժողականության և լայնախոհության պահանջները, առանց որոնց չկա «ժողովրդավարական հասարակություն»:

Խոսքի ազատության իրավունքի իրացման հարթակ է նաև լրատվամիջոցների գործունեությունը:

Միևնույն ժամանակ, խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և որոշ դեպքերում այն ենթակա է սահմանափակման, քանի որ խոսքի որոշակի տեսակ զրկված է խոսքի ազատությամբ առաջարկվող պաշտպանությունից և նույնիսկ կարող է ենթադրել պատասխանատվության կիրառում: Խոսքի ազատության իրավունքի խնդրահարույց ձևերը, որոնք կարող են սահմանափակման առիթ հանդիսանալ արտահայտվում են նաև սեքսիստական, խտրական, ատելության խոսքի և նմանատիպ այլ անթույլատրելի ձևերով: Դրանք ձևավորում են հաղորդակցման այնպիսի բովանդակություն, որի տեղադրումը «գաղափարների և տեղեկատվության շուկայում» ինքնին ենթակա է սահմանափակման[8]: Խոսքի ազատության սահմանները կքննարկվեն հաջորդող բաժիններում:

Հավասարության իրավունքը

Հավասարության իրավունքը հաճախ դիտարկվում է իբրև սուվերեն իրավունք, որի հիմնական նպատակն է պաշտպանել անձի ինքնությունը, հարմարեցնել կառուցակարգերը մարդկանց կարիքներին և տարբերություններին և պաշտպանել անձին նախապաշարմունքներից և կարծրատիպերից: Խտրականության չենթարկվելու իրավունքը հաճախ դիտարկվում է իբրև հավասարության իրավունքի անհրաժեշտ բաղադրիչ, քանի որ անձանց հավասար կարևորության և ինքնավարության հաստատման հիմնական միջոցը նրանց հանդեպ անհիմն տարբերակված վերաբերմունքի վերացումն է[9]:

[8] Media Regulatory authorities and hate speech; https://rm.coe.int/media-regulatory-authorities-and-hate-speech/16807338f5

[9] Nikolaidis, Charilaos. (2014). The right to equality in European Human rights law: The quest for substance in the jurisprudence of the European Courts. 10.4324/9781315780061.

Հավասարության, անխտրականության, կամ խտրականության բացառման, կամ խտրականության չենթարկվելու իրավունքը ամրագրված է թե՛ Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ), ներառյալ Աշխատանքի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) և այլ կառույցների, թե՛ տարածաշրջանային՝ Եվրոպայի (ներառյալ՝ Եվրոպական միության (ԵՄ), Եվրոպայի խորհրդի (ԵԽ), Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Աֆրիկյան և Ամերիկյան, և այլ իրավական մեխանիզմներով: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (Կոնվենցիա, ՄԻԵԿ) ի սկզբանե 14-րդ հոդվածով սահմանել է խտրականության չենթարկվելու իրավունքը որպես Կոնվենցիայով երաշխավորված մյուս իրավունքներից կախում ունեցող նորմ, քանի որ այդ հոդվածով արգելվում է խտրականությունը Կոնվենցիայով երաշխավորված այլ իրավունքների իրացման ընթացքում: 2000թ-ից Կոնվենցիային կից 12-րդ լրացուցիչ արձանագրությամբ խտրականության չենթարկվելու իրավունքն ամրագրվել է նաև իբրև առավել ինքնաբավ իրավունք և Կոնվենցիան այժմ երաշխավորում է խտրականության չենթարկվելու իրավունքը օրենքով ամրագրված որևէ իրավունքի իրացման հետ կապված: Ի լրումն՝ Կոնվենցիայի 7-րդ արձանագրությունը երաշխավորում է հավասարությունը ամուսինների միջև: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 7-րդ և 12-րդ լրացուցիչ արձանագրությունները վավերացրել է նաև Հայաստանը:

Խտրականության չենթարկվելու իրավունքի համատեքստում արգելվում է ուղղակի, անուղղակի խտրականությունը, հետապնդումը, ոտնձգությունը, ասոցացված խտրականությունը և վիկտիմիզացիան, ինչպես նաև խտրականության հրահրումը, որը կարող է դրսևորվել նաև իբրև ատելության խոսք: Եվ որոշ դեպքերում խտրականության հրահրումը հասնում է ատելության խոսքի դրսևորման[10]: Միջազգային մարդու իրավունքների համակարգը չունի ատելության խոսքի համընդհանուր ընդունված սահմանում: Հիմնականում ատելության խոսքը ներառում է խոսք, որը քարոզում, խթանում կամ հրահրում է ատելություն, խտրականություն կամ բռնություն: Որպես ատելության խոսք սովորաբար սահմանվում են արտահայտման այն ձևերը, որոնք հանգեցնում են, բացահայտում կամ խրախուսում են թշնամանքը խմբի կամ անհատի նկատմամբ՝ խմբին նրա անդամակցության պատճառով: Այն վնասակար խոսքի ծայրահեղ աստիճան է, որը խարխլում է մարդու իրավունքների հիմնական արժեքները և պահանջում է, որպեսզի պետությունները ձեռնարկեն առավել համապարփակ և խիստ միջոցներ: Կան ատելության խոսքի տարբեր աստիճաններ, որոնք պահանջում են տարբեր տեսակի պարտավորություններ: Այն ներառում է, ի թիվս այլոց, բռնության և խտրականության դրդումը: Սեքսիստական, կարծրատիպային, խտրական խոսքը տարբերվում է ատելության խոսքից, եթե այն չի պարունակում հատուկ դիտավորություն

[10] Տե՛ս Գծապատկեր 1

և վնասակարություն, որը նրանց կհասցնի ատելության խոսքի և բռնության կոչերի աստիճանի:

Խտրականության հրահրումը, դրդումը, հրահանգը, ցուցումն անհատների կամ խմբերի նկատմամբ նրանց պաշտպանված հատկանիշից ելնելով խտրական վերաբերմունքի դրսևորման դիտավորյալ խրախուսումը կամ հորդորներն են: Այն ներառում է նաև այնպիսի վերաբերմունքի ակտիվ պաշտպանությունը, որն արդարացնում է անհատների կամ խմբերի հանդեպ անհավասար վերաբերմունքը, նրանց բացառումը կամ հետապնդումը և այլ բացասական գործողությունները: Խտրականության հրահրումը կարող է դրսևորվել տարբեր ձևերով, ներառյալ, բանավոր արտահայտություններով, գրավոր նյութերով, նկարներով, հրապարակային ելույթներով՝ ինչպես անցանց, այնպես էլ առցանց հարթակներում: Իսկ լրատվամիջոցների գործունեության շրջանակում գենդերային հավասարության մակարդակը կապված է հասարակության մեջ գենդերային հավասարության վիճակի հետ, մասնավորապես, գենդերային հավասարության օրենսդրության և ընդհանրապես հասարակություններում գենդերային հավասարության վերաբերյալ իրազեկման մակարդակի հետ[11]:



Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն ամփոփիչ եզրակացություններում հիմնականում սեքսիստական ատելության խոսքը կապում է գենդերային վնասակար կարծրատիպերի վերաբերյալ իր դրույթի հետ, որը համարվում է և՛ խտրականության պատճառ, և՛ ձև[12]:

[11] Global Study: Gender Equality and Media Regulation. S. Macharia and J. Barata Mir. 2022. https://www.diva-portal.org/smash/get/diva2:1734313/FULLTEXT01.pdf

[12] Concluding observations on the seventh periodic report of Finland. CEDAW/C/FIN/CO/7. 2014 https://undocs.org/Home/Mobile?FinalSymbol=CEDAW%2FC%2FFIN%2FCO%2F7&Language=E&DeviceType=Desktop&LangRequested=False

Խոսքի ազատության սահմանափակումը

Միջազգային իրավական կարգավորումները սահմանում են խոսքի ազատության սահմանափակման հնարավորություն ժողովրդավարական հասարակությունում օրենքով սահմանված դեպքերում, ներառյալ՝ այլոց իրավունքների պաշտպանության նպատակով:

Միջազգային չափանիշների ուսումնասիրությունը պատկերացում է տալիս խոսքի ազատության իրավաչափ սահմանափակումների մասին, որոնք առաջին հերթին ուղղված են խտրական արտահայտությունների, ատելության խոսքի դեմ պայքարին:
Նման չափորոշիչները սահմանված են Միավորված ազգերի կազմակերպության, ներառյալ Կանանց նկատմամբ բոլոր ձևերի վերացման կոնվենցիան, Եվրոպայի Խորհրդի, Եվրապական միության պարտադիր բնույթ կրող փաստաթղթերով, որոնք կենտրոնանում են խոսքի ազատության շրջանակի, ինչպես նաև դրա սահմանափակումների վրա:

Բացի այդ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետությունները պետք է նաև արգելեն «ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որը հանդիսանում է խտրականության, թշնամանքի կամ բռնության դրդում»: Սույն դրույթը մատնանշում է միայն երեք հիմքով ատելության քարոզչության արգելք, սակայն Կարծիք ունենալու և արտահայտվելու ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողը, արձանագրելով, որ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների չափանիշներն երաշխավորում են պաշտպանություն խտրականությունից ավելի լայն ցանկի հիմքով, քան 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հիմքերով: Զեկուցողը կոչ է արել 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված արգելքը տարածել միջազգային մարդու իրավունքների փաստաթղթերով խտրականությունից պաշտպանված հիմքերի ավելի լայն ցանկի վրա: Նա նշել է, որ միջազգային չափորոշիչները ապահովում են պաշտպանություն ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդյան կամ այլ կարգավիճակի, ներառյալ բնիկ ծագման կամ ինքնության, հաշմանդամության, միգրանտի կամ փախստականի կարգավիճակի հիմքով անբարենպաստ վիճակների հիմքով, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության կամ ինտերսեքս լինելու հիմքով:

Անխտրականության սկզբունքի և խոսքի ազատության սահմանափակումները քննարկել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում: Այսպես,

Պավել Իվանովն ընդդեմ Ռուսաստանի[13] գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ընդգծել է, որ Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքներն են հանդուրժողականությանը, սոցիալական խաղաղությանը և անխտրականությանը: Այն նշել էր, որ դիմումատուի հայացքների ընդգծված հակասեմական բնույթը, և համաձայնել ներպետական դատարանների կողմից տրված գնահատականի հետ, որ դիմումատուն իր հրապարակումների միջոցով ձգտում էր ատելություն սերմանել հրեա ժողովրդի նկատմամբ: Իսկ նման համընդհանուր և կատաղի հարձակումը մեկ էթնիկ խմբի վրա հակասում է Կոնվենցիային: Պ. Իվանովին 2003թ.-ին ռուսական իշխանությունները մեղադրանք էին առաջադրել զանգվածային լրատվության միջոցների միջոցով էթնիկ, ռասայական և կրոնական ատելություն հրահրելու համար, այն հիմքով որ դիմումատուն իր թերթում մի շարք հրապարակումների միջոցով կոչ էր անում բացառել հրեաներին սոցիալական կյանքից, պնդել էր որ առկա է պատճառահետևանքային կապ սոցիալական, տնտեսական և քաղաքական անհարմարությունների և հրեաների գործունեության միջև:

Վերը նշված Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է, որ բանավոր ուղղակի հարձակումների և ֆիզիկական սպառնալիքների, ներառյալ սեռական կողմնորոշման հիմքով ատելության խոսքի դեմ պայքարի համար անհրաժեշտ են քրեաիրավական միջոցներ, նշելով, որ ատելություն պարունակող մեկնաբանությունները այս դեպքում պարունակել են բռնության անթաքույց կոչեր: Դատարանը արձանագրել է, որ Կառավարությունը ձախողել է համարժեք կերպով պաշտպանել անձին հոմոֆոբ ատելության խոսքից և նա իր սեռական կողմնորոշման պատճառով դարձել է ատելության ուղղակի թիրախ:

Բաչկովսկին և ուրիշներն ընդդեմ Լեհաստանի գործով Վարշավայի քաղաքապետը հոմոֆոբ բնույթի հրապարակային հայտարարություններ էր արել՝ ասելով, որ սեռական կողմնորոշման հիմքով խտրականության մասին իրազեկվածության բարձրացման երթի անցկացման թույլտվություն նա չէր տա: Իրավասու վարչական մարմինը հետևելով այս խոսքին, մերժել էր թույլտվությունը, սակայն որոշումը պատճառաբանել են ցուցարարների միջև բախումները կանխելու անհրաժեշտությամբ: ՄԻԵԴ-ը գտել է, որ քաղաքապետի հայտարարությունները կարող էին ազդել իրավասու մարմինների որոշման վրա, և որ որոշումը պայմանավորված էր սեռական կողմնորոշման հիմքով, հետևաբար, հանդիսանում է խտրականությունից զերծ լինելու իրավունքի հետ համակցված հավաքների ազատության խախտում[14]:

[13] Pavel Ivanov v. Russia. Application Number 35222/04. 20 February 2007. https://hudoc.echr.coe.int/fre#{%22itemid%22:[%22001-79619%22]}

[14] Bączkowski and Others v. Poland, 2007. https://hudoc.echr.coe.int/eng?i=001-80464

Փորձելով հնարավոր որոշակի դարձնել խոսքի և ազատության և հավասարության իրավունքի համատեղ կիրառման վերաբերյալ մոտեցումները՝ Հոդված 19 միջազգային կազմակերպությունը մի շարք այլ կազմակերպությունների հետ միասին մշակել է Խոսքի ազատության և հավասարության վերաբերյալ Քեմդենի սկզբունքները[15]: Սկզբունքները արտահայտում են ինչպես խոսքի ազատության, այնպես էլ խտրականության չենթարկվելու իրավունքի շուրջ բավարար կարգավորումների անհրաժեշտությունը, ինչպես նաև նշում, որ պետությունները պետք է հստակ իրավական և քաղաքական շրջանակ սահմանեն խտրականության դեմ պայքարի և հավասարության իրավունքի իրացման համար՝ ներառյալ, կապված խոսքի ազատության հետ:

Անդրադառնալով լրատվամիջոցների պարտավորություններին՝ սկզբունքները ընդգծում են բոլոր լրատվամիջոցների սոցիալական պատասխանատվությունը խտրականության դեմ պայքարի և միջմշակութային փոխըմբռնման խթանման գործում, ի թիվս այլի հոգ տանելով փաստերի վրա հիմնված և զգայուն կերպով հաղորդելու մասին՝ միաժամանակ ապահովելով, որ խտրականության դեպքերի մասին տեղեկությունը հասցվի հանրության ուշադրությանը, զգուշանալով անհատների և խմբերի նկատմամբ խտրականության կամ բացասական կարծրատիպեր առաջացնելուց, բարձրացնելով խտրականության և կարծրատիպերի վնասի մասին տեղեկացվածությունը, հաղորդելով տարբեր խմբերի մասին, նրանց տրամադրելով լսված լինելու հարթակ: Հանրային հեռարձակողների համար սկզբունքները առաջարկում են պարտավորությունների առավել բարձր շեմ, ըստ որի հանրային հեռարձակողները պետք է պարտավորված լինեն խուսափել անհատների և խմբերի նկատմամբ բացասական կարծրատիպերից, պահանջելով նրանցից խթանել միջմշակութային փոխըմբռնումը և նպաստել տարբեր համայնքների և նրանց առջև ծառացած խնդիրների ավելի լավ ընկալմանը: Սա պետք է ներառի հաղորդումների հեռարձակում, որտեղ տարբեր համայնքներ ներկայացվում են որպես հասարակության հավասար անդամներ:

Անդրադառնալով լրատվամիջոցների և լրագրողների մասնագիտական վարքագծի կանոններին՝ սկզբունքները սահմանում են, որ դրանք պետք է արտացոլեն հավասարության սկզբունքները, իսկ լրատվամիջոցների մասնագետների մասնագիտական զարգացման ծրագրերը պետք է բարձրացնեն նրանց իրազեկվածությունը այն դերի մասին, որ լրատվամիջոցները կարող են խաղալ հավասարության խթանման և բացասական կարծրատիպերից խուսափելու անհրաժեշտության մասին:

[15] The Camden Principles on Freedom of Expression and Equality. 2009. https://www.article19.org/data/files/pdfs/standards/the-camden-principles-on-freedom-of-expression-and-equality.pdf

Պեկինյան սկզբունքները[16] արձանագրել են, որ կանանց բացասական և նվաստացուցիչ պատկերների շարունակական արտացոլումը էլեկտրոնային, տպագիր, տեսա- և ձայնային լրատվամիջոցներում պետք է փոխվի, ինչպես նաև պետք է մշակվեն միջոցառումներ՝ գենդերային կողմնակալ ծրագրավորումը վերացնելու համար: Այն ընդգծել է, որ կառավարությունները և այլ դերակատարները պետք է խթանեն լրատվամիջոցների վերաբերյալ քաղաքականությունում և ծրագրերում գենդերային հեռանկարը ներառելու ակտիվ և տեսանելի քաղաքականություն: Խոսքի ազատությանը համահունչ պետք է ձևավորվեն և հզորացվեն լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմները, մշակվեն կարգավորող մեխանիզմներ, ներառյալ, որոնք կնպաստեն ԶԼՄ-ների և հաղորդակցման համակարգերի կողմից կանանց վերաբերյալ հավասարակշռված և բազմազան պատկերացումների ձևավորմանը:

Այսպիսով իրավունքների փոխլրացման և փոխկապակցվածության լույսի ներքո դիտարկելիս պարզ է դառնում, որ ազատ խոսքը, անձի ազատ արտահայտումը հնարավոր է միայն այդ խոսքի համար ապահով, հանդուրժող միջավայրում:
Այս երկու իրավունքների սահմանը իսկապես նուրբ է, իսկ հավասարակշռումը բարդ խնդիր, սակայն կարևոր է նկատի ունենալ, որ խոսքի ազատության սահմանափակումները ենթադրում են խիստ և մանրակրկիտ վերլուծություն, իսկ խտրականության չենթարկվելու իրավունքի պաշտպանության պահանջներին համապատասխան դրա բալանսավորումը թույլ է տալիս նաև հասնել խոսքի ազատության իրավունքի լիարժեք պաշտպանությանը, մասնավորապես, խտրականության ենթարկվելու սպառնալիքի ներքո գտնվող անձանց համար: Այսպես, գենդերային ինքնության հիմքով խտրական, ներառյալ ատելության խոսքը կարող է հանգել գենդերային ինքնության հիմքով խտրականության ենթարկվող անձանց մարգինալացմանը և նրանց այլ իրավունքների խախտումների, բացասաբար ազդելով նաև նրանց խոսքի ազատության իրավունքի իրացման հնարավորությունների վրա, ինչպես նաև դրա միջոցով այլ իրավունքների պաշտպանության վրա: Այս երկու իրավունքները փոխլրացնում են մեկը մյուսին: Առանց ազատ խոսքի չի կարող խրախուսվել և պաշտպանվել հավասարությունը և հակառակը:

Ելնելով վերը նշված չափանիշներից, կարելի է արձանագրել, որ արտահայտվելու ազատության իրավունքը կարող է սահմանափակվել՝ պաշտպանելու գենդերային հավասարությունը և պաշտպանելու սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հիմքով խտրականությունից զերծ մնալու իրավունքը, պայմանով, որ խոսքի ազատության սահմանափակումը համապատասխանի երեք մասից բաղկացած թեստին: Այսինքն, սահմանափակումը լինի իրավաչափ, անհրաժեշտ ժողովրդավարական

[16] Beijing Declaration and Platform for Action.1995. https://www.un.org/womenwatch/daw/beijing/pdf/BDPfA%20E.pdf

հասարակությունում, համաչափ և սահմանված օրենքով: Բացի այդ, պետությունները պետք է սահմանափակեն այնպիսի խոսքը, որը հասնում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ՄԱԿ-ի միջազգային դաշնագրի 20(2) հոդվածով սահմանված ծանրության աստիճանի:

Միևնույն ժամանակ, ՄԱԿ-ի և ԵԽ մարմինները հաճախ ընդգծվում են, որ քրեականացման միջոցները պետք է կիրառվեն միայն ամենածայրահեղ դեպքերում, օրինակ, երբ խոսքը ներկայացնում է հստակ և անմիջական վտանգ: Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ քրեական պատժամիջոցները, որոնք վերաբերում են արտահայտման ոչ իրավաչափ ձևերին, պետք է դիտվեն որպես վերջին միջոց, որը պետք է կիրառվի խիստ արդարացված իրավիճակներում, երբ որևէ այլ միջոց չի գործի որպեսզի հանրային շահից ելնելով հնարավոր լինի հասնել անհատի իրավունքների ցանկալի պաշտպանության: Սահմանափակումները, որոնց նպատակն է պաշտպանել փոքրամասնություններին ծայրահեղականությունից կամ ռասիզմից, չպետք է ունենան ընդդիմությանը և այլախոհների ձայները խլացնելու, փոքրամասնություններին լռեցնելու և գերիշխող քաղաքական, սոցիալական և բարոյական դիսկուրսը և գաղափարախոսությունը ամրապնդելուն ուղղված ազդեցություն[17]:

<u>Ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարականը</u> նշում է, որ որոշ դեպքերում ատելության խոսքի օգտագործումը պետք է քրեականացվի[18]: Այն ևս ընդգծում է, որ քրեական օրենսդրության կիրառումը ընդունելի է պայմանով, որ որևէ այլ նվազ սահմանափակող միջոց արդյունավետ չէ և հարգանքը խոսքի ազատության և սեփական կարծիքն ունենալու նկատմամբ ապահովվում է[19]:

Խոսքի ազատության իրավունքի կարգավորման հարցում առավել տարածված են միջամտության այնպիսի միջոցներ, ինչպիսիք են ինքնակարգավորման մեխանիզմներն ու կրթությունը: Իսկ հաշվի առնելով, որ սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրական և վնասակար ապատեղեկատվության հիմքում հաճախ խորը արմատացած կարծրատիպեր են, խնդրի կարգավորումն առավել ևս պահանջում է համապարփակ մոտեցում, որը կթիրախավորի կարծրատիպերը:

[17] Blasphemy, insult and hatred: finding answers in a democratic society. Science and technique of democracy, No. 47 https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-STD(2010)047-e

[18] Ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովի ընդհանուր քաղաքականության թիվ 15 հանձնարարականը ,էջ 5. https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-hate-speech-armenian-trans/1680a1dced

[19] Նույն տեղում, թիվ 10 կետ:

Լրատվական դաշտի կարգավորումների միջազգային փորձի հակիրճ ուսումնասիրություն

Հեռարձակման մեջ խտրականությունը, ապատեղեկատվությունը և ատելության խոսքը, բավականին տարածված խնդիր է բազմաթիվ պետություններում, և միևնույն ժամանակ այն զուգորդվում է մեդիա դաշտի փոփոխություններով, առցանց մեդիա պլատֆորմների տարածմամբ և նոր բիզնես մոդելների հետ: Խոսքի ազատության իրացման գերակշռող միջավայր է դարձել առցանց միջավայրը, ներառյալ՝ սոցիալական ցանցերը:

Հատվող և փոխլրացնող իրավունքների կիզակետում գտնվող արժեքները՝ անձի արժանապատվությունը, ազատ խոսքն ու հավասարությունն ու հանդուրժողականությունը պաշտպանելու համար պահանջվում է նաև յուրաքանչյուր իրավունքի իրացման և պաշտպանության, սահմանափակումների և չարաշահումների արգելքի բավարար չափով կարգավորող օրենսդրություն: Անհնար է ապահովել խոսքի ազատության լիարժեք և խտրականությունից զերծ մնալու իրավունքին համահունչ կարգավորում առանց վերջինիս վերաբերյալ բավարար կարգավորումների:

Միևնույն ժամանակ կարգավորումները պետք է տարածվեն տեղեկության տարածման բոլոր միջոցների վրա, քանի որ յուրաքանչյուր բացը կարող է բացասական հետք թողնել հասարակությունում մարդու իրավունքներին համահունչ արժեքների տարածման վրա: Մինչդեռ ապատեղեկատվությունը, խտրական խոսքը ենթարկվում է փափուկ կարգավորումների, ատելության խոսքը և խտրականության հրահրումը և խրախուսումը ստանում է նաև քրեաիրավական գնահատական:

Տեսաձայնային մեդիա ծառայությունների վերաբերյալ ԵՄ հրահանգը[20] ներառում է պարտավորություն տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողների համար՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու՝ ի թիվս այլոց բռնություն, ատելություն և ահաբեկչություն հրահրող բովանդակության դեմ պայքարելու համար: Հրահանգի կանոնակարգման շրջանակը ներառում է տեսանյութերի փոխանակման հարթակները, ինչպիսին է YouTube-ը, ինչպես նաև սոցիալական մեդիա ծառայություններում տարածվող տեսաձայնային բովանդակությունը, ինչպիսին է Facebook-ը, որն, ի թիվս այլոց, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի պաշտպանելու հանրային հաղորդումներից, օգտատերերի կողմից ստեղծված տեսանյութերից և տեսալսողական առևտրային հաղորդակցություններից, որոնք պարունակում են բռնության կամ ատելության հրահրում՝ ուղղված մի խումբ անձանց կամ խմբի անդամի դեմ:

[20] Directive 2010/13/EU of the European Parliament and of the Council of 10 March 2010 on the coordination of certain provisions laid down by law, regulation or administrative action in Member States concerning the provision of audiovisual media services (Audiovisual Media Services Directive). 10 March 2010 https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=celex%3A32010L0013

Հյուսիսային Մակեդոնիայի օրենսդրական կարգավորումները ներառում են արգելք այնպիսի բովանդակության համար, որը սպառնում են հրահրել կամ տարածել խտրականություն, անհանդուրժողականություն կամ ատելություն ռասայի, սեռի, կրոնի կամ ազգության հիման վրա[21]: Տեսալսողական միջոցներով գովազդի վերաբերյալ կարգավորումները արգելում են այնպիսի բովանդակություն, որը կասկածի տակ է դնում հարգանքը մարդկային արժանապատվության նկատմամբ, մասնակցում է կամ խթանում ցանկացած խտրականություն սեռի, ռասայի, էթնիկ պատկանելության, ազգության, կրոնի կամ համոզմունքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով: Օրենսդրությունը նաև սահմանում է սկզբունքներ, որոնց պետք է հետևեն հեռարձակողները իրենց բիզնես գործունեության ընթացքում, և դրանց ցանկում է՝ մարդասիրական և բարոյական արժեքների խրախուսումը և զարգացումը, ինչպես նաև յուրաքանչյուր անձի անձնական կյանքի և արժանապատվության պաշտպանություն, ազատությունների և իրավունքների հավասարություն՝ անկախ սեռից, ռասայից, ազգային, էթնիկ կամ սոցիալական պատկանելությունից, քաղաքական կամ կրոնական համոզմունքներից, անհատի և քաղաքացու սոցիալական կարգավիճակից, իրադարձությունների օբյեկտիվ և անկողմնակալ ներկայացում, տարբեր տեսակետների և կարծիքների հավասար վերաբերմունքով, ինչը հնարավորություն է տալիս ազատորեն ստեղծել հասարակական կարծիք առանձին իրադարձությունների և խնդիրների վերաբերյալ: Ի լրումն այս կարգավորումների, Մակեդոնիայում գործում է խտրականության կանխարգելման վերաբերյալ առանձին օրենք, որը սահմանում է խտրականության արգելք: Իսկ քրեական օրենսդրությունը պարունակում է ատելության խոսքը քրեականացնող__դրույթներ, պատասխանատվություն սահմանելով սեռի, գենդերային ինքնության, մարգինալացման այլ հիմքերով խտրականության համար, ինչպես նաև համակարգչային եղանակով ռասիստական կամ այլ հիմքերով, ներառյալ՝ սեռի, գենդերային ինքնության, մարգինալացվող այլ խմբին պատկանելության հիման վրա այլատյաց գրավոր նյութեր, լուսանկար կամ գաղափարի կամ տեսության նյութերի տարածման համար, որոնք աջակցում են, խթանում են, խրախուսում են խտրականությունը, ատելությունը կամ բռնությունը անձանց հանդեպ:

Նմանատիպ համապարփակ կարգավորումներ է պարունակում նաև Մոնտենեգրոյի օրենսդրությունը: Ռասայի, սեռի, հաշմանդամության, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության կամ այլ անձնական յուրահատկության վրա ատելություն կամ անհանդուրժողականություն խթանելու, կամ ռասայական կամ այլ խտրականություն դրդելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հետ մեկտեղ Մոնտենեգրոյի օրենսդրությունը արգելում է (թեև նշելով որոշակի բացառություններ[22])

[21] Media Regulatory Authorities and Hate Speech."A. R. Zubčevič, S. Bender, J. Vojvodić". CoE 2017. https://rm.coe.int/media-regulatory-authorities-and-hate-speech/16807338f5

[22] Լրատվամիջոցի հիմնադիրը և հեղինակը պատասխանատվության չեն ենթարկվում, եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված հրապարակված տեղեկությունները և կարծիքները գիտական կամ հեղինակային աշխատանքի մաս են, որի թեման հանրային խնդիր է և հրապարակվում են.

հրապարակել տեղեկություններ և կարծիքներ, որոնք հրահրում են խտրականություն, ատելություն կամ բռնություն մարդկանց կամ անձանց խմբի նկատմամբ՝ ելնելով նրանց պատկանելությունից կամ չպատկանելությունից որոշակի ռասայի, կրոնի, ազգի, էթնիկական խմբի, սեռի կամ սեռական կողմնորոշմանը[23]:

Լրատվամիջոցների մասին օրենսդրությունը նաև սահմանում է, որ տեսաձայնային մեդիան չպետք է խրախուսի, և պետք է թույլ չտա ատելություն կամ խտրականություն սերմանել կամ տարածել ռասայական, էթնիկական ծագման, մաշկի գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ֆինանսական վիճակի, արհմիության անդամության, կրթության, սոցիալական կարգավիճակի, ամուսնության կամ ընտանեկան կարգավիճակի, տարիքի, առողջական վիճակի, հաշմանդամության, գենետիկական ժառանգության, գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման հիման վրա: Օրենսդրությունը նաև արգելում է, որպեսզի տեսալսողական միջոցներով հեռարձակվող գովազդը խթանի սեռի, ռասայի, էթնիկական ծագման, կրոնի կամ համոզմունքի, հաշմանդամության, տարիքի կամ սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը:

Մոնտենեգրոյի Էլեկտրոնային մեդիայի գործակալության խորհուրդը Էլեկտրոնային լրատվամիջոցներում ծրագրային ստանդարտների կանոնագրքով, որն ընդունվել է ի կատարումն Էլեկտրոնային լրատվամիջոցների մասին օրենքի, սահմանելով ատելության խոսքը, ամրագրում է, որ էլեկտրոնային լրատվամիջոցների հաղորդումները չպետք է ուղղված լինեն մարդու երաշխավորված ազատությունների և մարդու ու քաղաքացու իրավունքների ոտնահարմանը, էլեկտրոնային լրատվամիջոցները չպետք է հեռարձակեն հաղորդումներ, որոնք քարոզում են էթնիկական խմբին պատկանելությունը, սեռը կամ սեռական կողմնորոշումը որպես խտրականության հիմք, և էլեկտրոնային լրատվամիջոցները պարտավոր են խուսափել վիրավորական արտահայտություններ օգտագործելուց, որոնք կարող են կապված լինել որոշակի սոցիալական խմբի հետ:

Տեսալսողական մեդիայի մասին Մոլդովայի օրենսդրությունը արգելում է ատելության խոսքը՝ հաղորդագրություն, որը տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում է ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության կամ

– առանց խտրականություն, ատելություն կամ բռնություն հրահրելու մտադրության և օբյեկտիվ լրատվական ռեպորտաժի մաս են.
– խտրականությունը, ատելությունը կամ բռնությունը կամ որևէ երևույթ, որը ներկայացնում է կամ կարող է դրդել նման վարքագծին, քննադատաբար մատնանշելու մտադրությամբ:

[23] Media Regulatory Authorities and Hate Speech."A. R. Zubčevič, S. Bender, J. Vojvodić". CoE 2017. https://rm.coe.int/media-regulatory-authorities-and-hate-speech/16807338f5

խտրականության վրա՝ սեռի, ռասայի, ազգության, կրոնի կամ համոզմունքի, հաշմանդամության կամ սեռական կողմնորոշման հիման վրա[24]:

Այն արգելում է տեսալսողական ծրագրերը, որոնք կարող են քարոզել, հրահրել, խթանել կամ արդարացնել ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմիտիզմը կամ ատելության այլ ձևեր, որոնք հիմնված են անհանդուրժողականության կամ խտրականության վրա՝ սեռի, ռասայի, ազգային պատկանելության, կրոնի, հաշմանդամություն կամ սեռական կողմնորոշման հիման վրա: Իսկ Տեսալսողական խորհուրդը պարտավոր է վերահսկել, թե արդյոք տեսալսողական մեդիա ծառայություններ մատուցողները խթանում կամ ստեղծում են բովանդակություն, որը հրահրում է բռնություն, ատելություն կամ խտրականություն իրենց կայքէջերում, իսկ խախտման դեպքում կիրառել պատասխանատվության միջոց, ներառյալ տուգանք:

Օրենսդրությունը արգելում է նաև սեքսիստական լեզվի օգտագործումը, որը մոտ է ատելության խոսքին, ինչպես նաև տեսալսողական մեդիա ծառայություններում կանանց և տղամարդկանց նկատմամբ բռնության և նվաստացնող վարքագծի տեսարանները: Սեքսիստական լեզուն սահմանվում է «Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքով[25] որպես արտահայտություններ և անդրադարձներ, որոնք ներկայացնում են կանանց և տղամարդկանց ստորացուցիչ, նվաստացնող և բռնի կերպով, վիրավորելով նրանց արժանապատվությունը:

«Գովազդի մասին» Մոլդովայի օրենքը[26] արգելում է սեքսիստական գովազդը, որը

ա) ներկայացնում է կանանց կամ տղամարդկանց որպես սեքսուալացված օբյեկտներ, ստորացուցիչ կամ նվաստացուցիչ, բռնի իրավիճակներում, որոնք վիրավորում են մարդու արժանապատվությունը;

բ) խտրական ձևով խթանում է սեքսիստական կարծրատիպերը՝ միաժամանակ պահպանելով կանանց՝ որպես թույլ, խոցելի և կախյալ էակների, ավելի ցածր սոցիալական դիրքի ավանդական ընկալումը:
Այս դրույթների խախտումը պատժվում է տուգանքով:

[24] Combating Hate Speech in the Media in the Republic of Moldova. Guide for Assessing and Processing Hate Speech Cases. A. Rokša-Zubčević, I. Corobcenco. CoE 2022. https://rm.coe.int/guide-combating-hate-speech-in-the-media-in-moldova-coe-9-/1680a9303d
[25] Law of the Republic of Moldova on Ensuring Equal Opportunities for Women and Men. 2006 https://www.lawyer-moldova.com/2012/11/law-on-ensuring-equal-opportunities-for.html
[26] Law of the Republic of Moldova about Advertising.1997 https://cis-legislation.com/document.fwx?rgn=3336

Նշված դրույթների կատարման հանդեպ վերահսկողության ընթացքում Տեսալսողական խորհուրդը պարտավոր է հաշվի առնել ոչ միայն ներքին օրենսդրությունը այլ նաև Մոլդովայի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները:

Գերմանիայի օրենսդրությունը 2017թ.-ին սոցիալական ցանցերի հարթակների նկատմամբ պարտավորություն էր սահմանել հեռացնել ատելության խոսքը սահմանված ժամկետներում (24 ժամ առավել պարզ դեպքերի համար), սահմանելով նաև տուգանք մինչև 50 միլիոն եվրո տուգանքների դեպքում, եթե սոցիալական ցանցը չկատարի պահանջը[27]: Այն համարվում է որպես համարձակ փորձ պետության կողմից վերահսկել տարածքում սոցիալական ցանցերի վնասակար բովանդակությունը, ներառյալ ապատեղեկատվությունը, սակայն նաև քննադատվում է տեղեկատվության ազատության անհամաչափ սահմանափակման, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սպառնալիքի համատեքստում[28]:

Ներպետական օրենսդրություն

Խոսքի ազատությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածը որպես մարդու հիմնական իրավունք ամրագրում է արտահայտման ազատությունը:

Սահմանադրական դրույթը ամրագրում է յուրաքանչյուր անձի համար կարծիքը ազատ արտահայտելու իրավունքը, որը ներառում է.

- սեփական կարծիք ունենալու,
- տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ *փնտրելու*, *ստանալու* և *տարածելու* ազատությունը (առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից):

[27] Germany: Network Enforcement Act Amended to Better Fight Online Hate Speech https://www.loc.gov/item/global-legal-monitor/2021-07-06/germany-network-enforcement-act-amended-to-better-fight-online-hate-speech/

[28] Germany's NetzDG: A key test for combating online hate. W. Echikson and O. Knodt. 2018 https://cdn.ceps.eu/wp-content/uploads/2018/11/RR%20No2018-09_Germany's%20NetzDG.pdf

Սահմանադրությունը առանձին դրույթով երաշխավորում է նաև տեղեկատվական միջոցների, ներառյալ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության ազատությունը:

Իրավունքի շրջանակի կարգավորման համար Սահմանադրությունը օգտագործում է երկու հիմնական գործիք, որոնցից մեկը սահմանված դեպքերում իրավունքի սահմանափակման հնարավորությունն է, մյուսը՝ իրավունքի չարաշահման արգելքը:

Այսպես, կարծիքի արտահայտման ազատությունը, ներառյալ տեղեկատվական միջոցների ազատությունը. կարող է սահմանափակվել օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Իսկ սահմանափակումը պետք է համապատասխանի Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներին, այն է.

- համաչափության սկզբունքին. սահմափակումը պիտանի և անհրաժեշտ լինի Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, իսկ սահմանափակման համար ընտրված միջոցները համարժեք լինեն սահմանափակվող կարծիքի արտահայտման ազատության նշանակությանը
- որոշակիության սկզբունքին. օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Սահմանադրությունը նաև արգելում է հիմնական իրավունքների և ազատությունները սահմանափակել ավելին քան այն սահմանափակումներն են, որոնք ամրագրված են ՀՀ միջազգային պայմանագրերով:

Իսկ Սահմանադրության 77-րդ հոդվածը արգելում է օգտագործել հիմնական իրավունքները, որոնց թվին է պատկանում նաև կարծիքի արտահայտման ազատությունը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Հավասարության իրավունքը ՀՀ օրենսդրության շրջանակներում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ամրագրում է խտրականության ընդհանուր արգելք: Խտրականության արգելք սահմանում են նաև մի շարք օրենքներ:

Միաժամանակ, հավասարության կամ խտրականությունից զերծ մնալու իրավունքի մասին համապարփակ օրենսդրություն Հայաստանի Հանրապետությունը չունի և առկա կարգավորումները դեռևս լիարժեք չեն սահմանում խտրականության հասկացությունը, խտրականության բոլոր տեսակները, խտրականության չենթարկվելու իրավունքի պաշտպանության համարժեք միջոցները, ինչը խոչընդոտում է հավասարության իրավունքի պաշտպանությանը Հայաստանում:

Խտրականության հասկացությունը սահմանված է երկու՝ առանձին խմբերի իրավունքները և մեկ՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերով[29]: Դրանք են՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» մասին ՀՀ օրենքը, որով սահմանված է գենդերային խտրականությունը, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում է հաշմանդամության հիմքով խտրականությունը և Աշխատանքային օրենսգիրքը:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքը արգելում է գենդերային խտրականությունը: Օրենքը գենդերային խտրականությունը սահմանում է սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը: Որպես անուղղակի գենդերային խտրականության ձև, օրենքը սահմանում է գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով (6-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ):

Ըստ օրենքի՝ գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

1) գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը.
2) գենդերային հավասարության ապահովման համար նորմատիվ իրավական բազայի ձևավորումը, կատարելագործումը, զարգացումը և միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխանեցումը.

[29] Ա. Ղազարյան, Վ. Գրիգորյան. Արդյոք անհրաժե՞շտ է «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքի ընդունումը: 2015թ. https://www.moj.am/storage/uploads/k1k_1HRAP.pdf

3) գենդերային հավասարության ապահովման համար գործուն իրավական և կազմակերպական մեխանիզմների ստեղծումը.
4) գենդերային հավասարության հասնելուն ուղղված պետական նպատակային ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրագործումը և դրանց ֆինանսավորումը.
5) կանանց և տղամարդկանց հնարավորությունների միջև անհավասարության վերացմանը միտված ժամանակավոր հատուկ միջոցների կիրառումը.
6) գենդերային վիճակագրության և գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման մշտադիտարկման իրականացումը.
7) գենդերային հավասարության խախտմանն ուղղված տեղեկատվությունից, քարոզչությունից հասարակության պաշտպանությունը.
8) գենդերային հավասարության մշակույթի ձևավորումը և քարոզչությունը.
9) պետական, տարածքային և համայնքային ծրագրերի և միջոցառումների ու զարգացման ռազմավարությունների մեջ գենդերային հավասարության հիմնախնդրի համալիր մոտեցումների ներդրումը:

Խոսքի ազատության սահմանափակումները

Խոսքի բովանդակության հիմքով դրա սահմանափակումներ կարող են կիրառվել քրեական, վարչական, քաղաքացիական կամ ներքին կանոնակարգային կարգավորումներով, հետևաբար նախատեսելով՝ քրեական, վարչական, քաղաքացիական և կարգապահական պատասխանատվություն:

Հայաստանի Քրեական օրենսգիրքը 329-րդ հոդվածով սահմանում է առավելագույնը 20 հազար դրամի չափով տուգանքի, 80-150 ժամ հանրային աշխատանքների և մինչև 2 տարի ազատազրկման ձևով[30] պատասխանատվություն ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար՝ անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված:
Քրեական օրենսգիրքը 330-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանում անձի կամ անձանց խմբի նկատմամբ ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված բռնություն գործադրելու

[30] 1-4 տարի՝ 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, 2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ 3) հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունների, զանգվածային լրատվության միջոցների կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ արարքը կատարելու դեպքում:

հրապարակային կոչը, նման բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը, ինչպես նաև այդ նպատակով նյութ կամ առարկա տարածելու համար։
ՀՀ դատական իշխանության պաշտոնական տվյալների համաձայն 2023 թ.-ին 329-րդ հոդվածով վարույթ է ընդունվել է, իսկ 2024-ի առաջին կիսամյակում 2 քրեական գործ, 330-րդ հոդվածով ընդունվել է 16 գործ, իսկ 2024 առաջին կիսամյակում՝ 13 գործ[31]։ Դատալեքս դատական տեղեկատվական համակարգի որոնման համակարգի միջոցով փորձեցինք պարզել, թե այս գործերից որևէ մեկը վերաբերել է արդյոք սեռի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությանը կամ ատելության խոսքին, ինչպես նաև բռնության հրապարակային կոչերին, սակայն նման գործ չհաջողվեց գտնել։

Ինչպես նշվել է վերը, սույն հետազոտության նպատակը չէ վերլուծել մասնավորապես ատելության խոսքի սրության աստիճանի հասնող ոչ իրավաչափ խոսքի կարգավորումների հիմնախնդիրները, այնուամենայնիվ, հետազոտության շրջանակում ուսումնասիրվող հարցի համատեքստում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Քրեական օրենսգրքի նշված կարգավորումներում խտրականության պաշտպանված հիմքերի նեղ շրջանակի սահմանմանը։

Այսպես, նշված կարգավորումները զգալի առաջընթաց են և որոշ չափով ներ են դրվել 2022 թ.-ին նոր Քրեական օրենսգրքի ընդունմամբ։ Այնուամենայնիվ, թեև պաշտպանված հիմքերի ցանկը սպառիչ չէ, և թույլ է տալիս իրավակիրառին դրույթը կիրառել նաև անձնական և սոցիալական բնույթի որևէ չնշված հիմքի առկայության դեպքում, սակայն կարևոր են համարում արձանագրել, որ նշված դրույթներով խտրականության առնվազն սահմանադրությամբ ամրագրված պաշտպանված ոչ բոլոր հիմքերի ամրագրումը, որոնք ներառում են նաև սեռը, կարող է բացասաբար ազդել կարգավորումների արդյունավետ կիրառման վրա։ Ավելին, ինչպես նշվել է բազմիցս, այն դեպքում, երբ խտրականության դեմ պայքարի վերաբերյալ իրավական դրույթներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքերը նշված չեն, դրանք կարող են առավել մեծ դիմադրության արժանանալ այս հիմքով իրավունքի պաշտպանության մեխանիզմների կիրառման ընթացքում։

Կարևոր է, որ քրեաիրավական այս կարգավորումները ներառում են նաև խտրականություն և անհանդուրժողականություն հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը։ Սակայն հոդվածի նման լայն դիսպոզիցիան կարող է այն առավել քիչ կիրառելի դարձնել, ուստի կարևոր է այս դրույթների վերաբերյալ դատական պրակտիկայի զարգացումը։ Կարևոր է նաև, որպեսզի հոդվածում կիրառված եզրերը

[31] ՀՀ դատական դեպարտամենտ. Վիճակագրություն. https://www.court.am/hy/statistic

ունենան սահմանումներ։ Այսպես, խտրականության, անհանդուրժողականության եզրերի՝ ՀՀ օրենսդրությամբ դեռևս սահմանված չլինելը կարող է ևս խոչընդոտել հոդվածի կիրառմանը։

Մյուս կողմից, միջամտությունը խոսքի ազատության սահմանափակման համատեքստում պետք է անհրաժեշտ նվազագույնը լինի և համապատասխանի խոսքի ազատության սահմանափակման համաչափության և ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության սկզբունքներին, իսկ քրեաիրավական ներգործության միջոցները պետք է կիրառվեն ծայրահեղ դեպքում։
Ուստի խտրականության և անհանդուրժողականության դեմ պայքարի կարևոր գործիք պետք է լինեն նաև վարչաիրավական, քաղաքացիաիրավական ներգործության միջոցները։

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը չի պարունակում խտրականությունից զերծ մնալու իրավունքի պաշտպանության կարգավորումներ և վարչաիրավական պատասխանատվության միջոցներ, բացառությամբ առանձին ոլորտային օրենսդրությամբ, օրինակ՝ Աշխատանքային օրենսգրքով խտրականության արգելքի դեպքերում։

Քաղաքացիաիրավական համակարգում կարգավորումները սահմանափակված են խոշտանգումների խոշտանգումից տուժած անձանց փոխհատուցման վերաբերյալ կարգավորումներով[32] և վիրավորանքի կամ զրպարտության միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորման վերաբերյալ կարգավորումներով։[33]

Զանգվածային լրատվության միջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրություն

Տեսալսողական մեդիա

Հայաստանում տեսալսողական մեդիան կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և մի շարք օրենքներով, մասնավորապես՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով,

[32] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք 1087.3-րդ հոդված. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193748
[33] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք 1087.1-րդ հոդված https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193748

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքով, «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով:
Ինչպես նշվել է, ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է կարծիքի արտահայտման ազատությունն ու մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը, ինչպես նաև ամրագրում է, որ պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը ապահովելու և հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը վերահսկելու համար ՀՀ Սահմանադրությամբ ձևավորվում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, որն անկախ Սահմանադրական մարմին է, և իր գործունեության, հեռուստատեսության և ռադիոյում տեղեկատվության ազատության մասին տարեկան հաղորդում է ներկայացնում ՀՀ ազգային ժողովին: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը 4-րդ հոդվածով սահմանում է Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները, ինչպես նաև լրատվության որոշում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները՝ 7-րդ հոդվածով: Սահմանափակումներով ամրագրված են հետևյալ արգելքները՝

1. Արգելվում է օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:
2. Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, և այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ազգային, ռասայական, սեռային, կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն, կամ որոնք պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն: Ըստ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից տրված տեղեկության՝ Հանձնաժողովն իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս մեկ անգամ է հայտնաբերել նշված դրույթի խախտում, արձանագրելով, որ հեռարձակողի եթերում հնչել են ազգային խտրականություն պարունակող արտահայտություններ: Նշված դեպքով հարուցված վարույթի արդյունքում Հանձնաժողովը հեռարձակողին հայտնել է նախազգուշացում[34]:

Հանրային հեռարձակողներ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը նաև լրացուցիչ կարգավորում է սահմանում հանրային հեռարձակողի կարգավիճակ ունեցող մեդիայի համար, պարտավորեցնելով սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական, սեռային, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը:

Հանրային հեռարձակողի կարգավիճակ ունեն թվով երեք ընկերություն, դրանք են՝ Հանրային հեռուստաընկերությունը, Հանրային Ռադիոն և Շողակաթ Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը: Երեք ընկերությունների կառավարումն իրականացնում է Հանրային հեռարձակողի խորհուրդը:
Խորհուրդը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական), ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ հաղորդում:

Խորհրդի 2022 թ.-ի, 2023 թ.-ի հաշվետվությունները ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Խորհուրդն ըստ էության չի անդրադառնում, թե ինչպես է հանրային

[34] «ՌԱԴԻՈ ԱՎՐՈՐԱ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին (19.02.2024թ. N 23-Ա) https://tvradio.am/wp-content/uploads/2024/02/23-24.pdf

հեռարձակողների կողմից ապահովվել «Տեսալսողական մեդիայի մասին» 22 -րդ հոդվածի պահանջների կատարումը, փոխարենը՝ հաղորդումները պարունակում են հեռարձակված հաղորդումների հակիրճ նկարագրություն։

Գովազդի բովանդակության կարգավորումները

«Գովազդի մասին» ՀՀ օրենքը սահմանում է որոշակի պահանջներ, որոնք կարող են նպաստել ֆիլտրել անհանդուրժողականության և կարծրատիպերի տարածումն ու ուժեղացումը։ Օրենքը սահմանում է գովազդի օրինականության, հավաստիության և պատշաճության պահանջ։ Օրինականության պահանջը, ի թիվս այլի Օրենքի 6-րդ հոդվածով արգելում է այն գովազդը, որն իրականացվում է օգտագործելով նախապաշարումները և սնահավատությունը, քաղաքացիներին բռնության, հարձակողականության, խուճապի, ինչպես նաև բարոյականության համընդհանուր նորմերի խախտման դրդող կոչերը, սպառողի կյանքին, առողջությանը կամ անվտանգությանը սպառնացող գործողությունների դրդող կոչերը և փաստարկումները։
Գովազդի պատշաճությունը 8-րդ հոդվածով արգելում է գովազդը, որը պարունակում է ռասային, ազգությանը, մասնագիտությանը կամ սոցիալական ծագմանը, տարիքային խմբին կամ սեռին, լեզվին, կրոնական և այլ համոզմունքներին վերաբերող վիրավորական արտահայտություններ, համեմատություններ և պատկերներ։
Նշված տեսալսողական մեդիայի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է։

Առցանց գովազդի ծավալների մեծացման[35] հետ միասին աճում և արդիական է դառնում առցանց գովազդի կարգավորման և վերահսկման հիմնախնդիրը։

Լրատվական դաշտի ինքնակարգավորման համակարգը

Ըստ փորձագետների՝ լրատվական դաշտի բովանդակության կարգավորման լավագույն միջոցը ինքնակարգավորման գործուն համակարգերի առկայությունն է։

[35] Ինտերնետային գովազդների ծավալը Հայաստանում. որքան գովազդ է տեղադրվում մեդիայում, սոցցանցերում, որոնողական համակարգերում. 2023.
https://media.am/hy/newsroom/2023/07/07/35612/

Հայաստանում ինքնակարգավորման համակարգի առկայությունը պարտադիր է լիցենզավորված հեռարձակողների համար, որոնց լիցենզիայի պայման է հանդիսանում էթիկայի կանոնագիրքը և կանոնագրքի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները: Եվ հեռարձակողն է պատասխանատու ձևավորելու մեխանիզմներ էթիկայի կանոնների կիրառումն ապահովելու համար: ՀՀ-ում գործող լիցենզավորված հեռարձակողների մեծամասնությունն ընտրել է Հայաստանի ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմնի Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, իսկ մի քանի հեռարձակող՝ ներքին ինքնակարգավորման տարբերակներ[36]: Միևնույն ժամանակ նման ինքնակարգավորման համակարգերի առկայությունը պարտադիր չէ համացանցային մեդիայի համար: Եվ թեև որոշ համացանցային լրատվական կազմակերպություններ միացել են ինքնակարգավորման մեխանիզմների, օրինակ՝ նույն Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնին[37], այնուամենայնիվ ընդհանուր առմամբ խնդիրը լիարժեք կարգավորված չէ:

Որպես դրական միտում անհրաժեշտ է նշել, որ ՀՀ կառավարությունը 2024-2026 թթ.-ի Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգով և դրանից բխող գործողությունների ծրագրով[38] ևս ճանաչել է ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակում ինքնակարգավորման մեխանիզմների դերը և հանձն առնվել խթանել այդ մեխանիզմների զարգացումը:

Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմինը[39] զանգվածային լրատվության միջոցների սուբյեկտների և լրագրողների շրջանում ազատ արտահայտվելու իրավունքի հարցերով վեճերի ինքնակարգավորման մարմին է, և որը գործում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի (այսուհետ՝ Կանոնագիր) հիման վրա[40]:

Կանոնագիրը որպես սկզբունքներ ամրագրում է մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ հարգանքի, ինչպես նաև զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ հարգանքի սկզբունքները: Ըստ այդ սկզբունքների խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

---

36 Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի Տարեկան հաղորդում. 2023. https://tvradio.am/wp-content/uploads/2024/03/Report-2023-compressed.pdf

37 Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը ստորագրած ԶԼՄ-ների ցանկ: https://ypc.am/wp-content/uploads/2024/06/List-of-Members-as-of-May-2024_arm.pdf

38 ՀՀ ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թթ. հայեցակարգն ու դրանից բխող գործողությունների ծրագիրը https://foi.am/news-events/33125

39 ԶԼՄ էթիկայի ինքնակարգավորման նախաձեռնության կայքէջ. https://mediaethics.am

40 Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր. https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf

5.1. Խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով:

5.2. Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը:
Իսկ այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար:

ԶԼՄ էթիկային դիտորդ մարմինը նաև մշակել է «Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսևորումները բացառելու և հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ» ուղեցույցը[41], որն անդրադառնում է սեռի, սեռական կողմնորոշման հիմքով նախապաշարումների, կանխակալությունների հիմնախնդրին, ինչպես նաև «Խոցելի խմբերի հիմնախնդիրները լուսաբանող լրագրողների համար ուղեցույց», որը ներառում է նաև երեխաների, բռնության ենթարկված կանանց և ԼԳԲՏ+ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ լրատվական բովանդակության ստեղծմանը:

ԶԼՄ էթիկայի դիտորդ մարմինը թույլ է տալիս բողոք ներկայացնել առցանց տարբերակով:[42]

ԶԼՄ դիտորդ մարմնի եզրակացությունները ունեն խորհրդատվական բնույթ և հանդիսանում են հեղինակավոր փորձագիտական ռեսուրս լրատվական միջոցների վարքագծին գնահատական տալու հարցում: Սակայն կարևոր է, որպեսզի շահագրգիռ կազմակերպությունները և անձինք օգտագործեն այս գործիքը ԶԼՄ-ներին հաշվետու պահելու համար, ներառյալ իրենց կողմից արձանագրված խնդիրները բերելով ԶԼՄ դիտորդ մարմնի օրակարգ[43]:

[41] «Զանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսևորումները բացառելու և հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ» ուղեցույցը https://ypc.am/wp-content/uploads/2016/01/Guidelines_Tolerance_arm.pdf
[42] https://ypc.am/self-regulation/?lang=hy#self-regulation-form
[43] Հարցազրույց Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի media.am կայքի խմբագիր Գեղամ Վարդանյանի հետ, 9 օգոստոսի, 2024թ.:

Առցանց լրատվական միջոցներ

Առցանց լրատվական միջոցների բովանդակության կարգավորումները ըստ էության իրականացվում են ընդհանուր խոսքի ազատության կարգավորումների շրջանակում ինչպես նաև համացանցի ինքնակարգավորման և լրատվական միջոցների ինքնակարգավորման համակարգերի շրջանակներում: Ի տարբերություն տեսալսողական մեդիայի, համացանցում հեռարձակվող լրատվամիջոցները չունեն խտրական բովանդակության բացառման վերաբերյալ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված պարտականություն, իսկ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի՝ խտրական բովանդակության համար պատասխանատվության ենթարկելու լիազորությունները չեն տարածվում համացանցային լրատվամիջոցների վրա: Այս առումով, որևէ մարմնի, ներառյալ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից այս լրատվամիջոցների բովանդակության մշտադիտարկման գործառույթը կարող է չափազանց բարդ լինել, այն կպահանջի մեծ ծավալի ռեսուրսներ: Իսկ համացանցում հիբրիդային մեդիա դերակատարների առկայության պարագայում դժվար կլինի ապահովել, որպեսզի մշտադիտարկման գործառույթը հավասարապես տարածվի բոլոր «մեդիա» համարվող ռեսուրսների վրա, առաջին հերթին հարց կծագի, թե որոնք են համարվելու լրատվական միջոց[44]: Սակայն մյուս կողմից կարելի է քննարկել որոշակի չափորոշիչներին համապատասխանող՝ առցանց հարթակում լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար խտրական բովանդակության բացառման սահմանման կանոնը, իսկ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովին վերապահել լիազորություն դիմում-բողոքների հիման վրա իրականացնել վարչական վարույթ, կիրառելով համապատասխան վարչական պատասխանատվության միջոցները[45]:

Առցանց միջավայրի կարգավորումները

Առցանց միջավայրը դարձել է խոսքի ազատության իրացման կարևորագույն հարթակներից մեկը, ինչպես անհատների կողմից իրենց կարծիքը արտահատելու, տեղեկություն որոնելու, գաղափարներ փոխանակելու համար, այնպես էլ լրատվական դաշտի միջոցով տեղեկության փոխանցման համար: Խոսքի ազատության, ներառյալ առցանց մեդիայի բովանդակության կարգավորումները առցանց միջավայրում ըստ

[44] Հարցազրույց մեդիափորձագետ Սառա Խոջոյանի հետ, 27 հունիսի, 2024թ.:

[45] Հարցազրույց Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի media.am կայքի խմբագիր Գեղամ Վարդանյանի հետ, 9 օգոստոսի, 2024թ.:

էության կարող են իրականացվել մի քանի հարթություններում: Հարթություններից մեկը դա ընդհանուր համացանցի կարգավորման համակարգերն են, մյուսը՝ առանձին կայքէջերի, սոցիալական ցանցերի հարթակները, և մյուսը՝ սոցիալական ցանցերում ձևավորվող համայնքներն են:

Առցանց միջավայրը տրամադրում է խոսքի ազատության իրացման լայն հնարավորություններ, սակայն նաև ոչ իրավաչափ խոսքի տարածման համար ևս լայն հարթակներ:

Կարծիքի և արտահայտվելու ազատության իրավունքի խթանման և պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողն ամեն դեպքում կոչ է արել հստակեցնել առցանց պլատֆորմների կողմից կիրառվող պաշտպանության շրջանակը՝ նպատակ ունենալով սահմանել պաշտպանված խմբերի հնարավորինս լայն շրջանակ, ինչպես նաև հստակեցնելով կիրառվող կանոնները արտահայտման ազատության սահմանափակման չափորոշիչներին համապատասխան[46]:

Անօրինական առցանց ատելության խոսքին հակազդելու մասին <u>ԵՄ վարքագծի կանոնագիրքը</u>, որը նախատեսված է կանխելու և հակազդելու առցանց ապօրինի ատելության խոսքի տարածմանը, համաձայնեցվել է 2016 թ.-ին մայիսին Facebook-ի, Microsoft-ի, Twitter-ի և YouTube-ի հետ: Հետագայում կանոնագրքին միացել են նաև Instagram, Snapchat and Dailymotion, Jeuxvideo.com, TikTok և LinkedIn, Rakuten Viber and Twitch-ը[47]: Սույն կանոնագրքի ազդեցությունը գնահատվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից մոնիտորինգի իրականացման միջոցով՝ հիմնված միասնական մեթոդաբանության վրա՝ համագործակցելով ԵՄ-ում տեղակայված տարբեր կազմակերպությունների հետ: Վարքագծի կանոնագրքի կիրառման ամենավերջին գնահատումը (ԵՄ 21 պետություններում կատարած մշտադիտարկման հիման վրա), որը հրապարակվել է 2022 թ.-ին ցույց է տալիս, որ այն ապահովում է որոշ դրական արդյունքներ, օրինակ՝ միացած կազմակերպությունները հեռացրել են իրենց հաղորդած խնդրային բովանդակության 63.6%-ը (36.4% չի հեռացվել):

Բացի այդ, առցանց պլատֆորմները ընդունել են սեփական ներքին կանոնագրքերը, որոնք ևս ուղղված են խնդրահարույց բովանդակության զտմանը: Օրինակ, Facebook և Instagram սոցիալական ցանցերը կիրառում են համապատասխանաբար Համայնքային չափորոշիչները կամ Համայնքի ուղեցույցները[48]: Ի լրումն, այս հարթակներում

---

[46] Promotion and protection of the right to freedom of opinion and expression. UN GA. A/74/486. 2019. https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Opinion/A_74_486.pdf

[47] The EU Code of conduct on countering illegal hate speech online. https://www.coe.int/en/web/cyberviolence/-/european-commission-the-eu-code-of-conduct-on-countering-illegal-hate-speech-online

[48] Community Standards Enforcement Report Assessment Results. Meta. 2022 https://about.fb.com/news/2022/05/community-standards-enforcement-report-assessment-results/

բովանդակությունը կարող է արգելափակվել նաև տեղական օրենսդրության հիման վրա, այս դեպքում բովանդակությունը սահմանափակվում է միայն այն տարածքում, որտեղ գործում է տվյալ օրենսդրությունը[49]: Հայաստանի ներքին օրենսդրական կարգավորումների հիման վրա արգելափակումներ Facebook և Instagram հարթակները երբևէ չեն կիրառել[50]:

Հայաստանյան միջավայրում Cyber hub կազմակերպությունը ունի պայմանավորվածություն Meta կազմակերպության հետ, որի շրջանակում կազմակերպությունը հնարավորություն ունի խտրականության և ատելության խոսքի վերաբերյալ հաղորդագրություն ուղարկել իրենց կցված կոնտակտային անձին, ինչը առավել դյուրին կարող է դարձնել Հայաստանյան Meta միջավայրում նման տեղեկատվական հոսքերին արդյունավետ արձագանքելու համար[51]: Սակայն այս ձևաչափը ևս ռեսուրսների անբավարարության պատճառով միշտ չէ, որ տալիս է իրական արդյունք:

Հայաստանում համացանցի կարգավորումը ըստ էության իրականացվում է նաև Ինտերնետ հանրություն ՀԿ-ի՝ «.հայ» եւ «.am» դոմենները կառավարող կազմակերպության կողմից[52]: Ըստ կազմակերպության կայքէջում տեղադրված տեղեկության՝ Ինտերնետ հանրությունը որոշակիորեն խթանում է Հայաստանում համացանցի բովանդակության զարգացումը, որակի բարելավումը: Կազմակերպությունը «.am» և «.հայ» դոմենային տիրույթներում համացանցի բովանդակության զարգացմանը մեր կողմից քննարկվող հարցերի համատեքստում նպաստում է դոմենների անունների գրանցման և բովանդակության շրջանակներում:

Այսպես, Ինտերնետ հանրություն կազմակերպության «.am» և «.հայ» դոմենային տիրույթներում դոմենային անունների գրանցման քաղաքականության 11-րդ կետի՝ արգելվում է գրանցել մարդու սեռով կամ ռասայով, կամ մաշկի գույնով, կամ էթնիկ կամ սոցիալական ծագումով, կամ գենետիկական հատկանիշներով, կամ լեզվով, կամ կրոնով, կամ տարիքով, կամ այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված խտրականություն ներկայացնող, կամ մարդու արժանապատվությունն այլ կերպ նվաստացնող, կամ բռնություն կամ պատերազմ քարոզող, կամ քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածող, կամ հայհոյանք ներկայացնող, կամ բարոյականության սկզբունքներին այլ կերպ հակասող, կամ հանրային շահին չհամապատասխանող դոմենային անուններ:

---

[49] How we assess reports of content violating local law. Meta. https://transparency.meta.com/reports/content-restrictions/content-violating-local-law/

[50] Armenia. Country specific information on content we restricted based on local law. Meta. https://transparency.meta.com/reports/content-restrictions/country/AM/

[51] Հարցազրույց մեդիափորձագետ Արթուր Պապյանի հետ, 8 օգոստոսի, 2024թ.

[52] Ինտերնետ հանրություն ՀԿ-ի կայքէջ www.isoc.am

Իսկ Ինտերնետ հանրություն ՀԿ-ի և պատվիրատուի միջև կնքվող պայմանագրի օրինակելի ձևի[53] համաձայն՝ կազմակերպությունը իրավունք ունի դադարեցնել տվյալ դոմենային անվան համար Ծառայությունը, իր կողմից որոշված ժամկետով կասեցնելով դրա հետագա օգտագործումը, եթե գրանցումը կատարվել է «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության Կանոնների, ՀՀ օրենսդրության և (կամ) նույն Պայմանագրի խախտմամբ, և (…) երբ համապատասխան դոմեն անվանման տակ գործող կայքերում տեղադրված են տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությանը և (կամ) որոնք ուղղված են որևէ ռասայական, էթնիկ կամ կրոնական խմբի դեմ թշնամանքի հրահրմանը:

Ինտերնետ հանրություն ՀԿ-ի քաղաքականությունը կիրառելի է «.am» և «.հայ» դոմենային տիրույթներում գործող օգտատերերի նկատմամբ:

Փորձագետները, ում հետ զրուցել ենք հետազոտության շրջանակում, նշել են, որ առցանց միջավայրում խոսքի ազատության պատժիչ բնույթի կարգավորումները չպետք է դիտարկվեն զատ համընդհանուր խոսքի ազատության կարգավորումներից, և առաջնային պետք է կիրառվել հանրության տեղեկատվական գրագիտության բարձրացման, ինքնակարգավորման, հանրային պարսավանքի միջոցները, ձևավորելով ճաշակ որպեսզի մարդիկ քիչ սպառեն չկարգավորվող բովանդակությունը[54]: Թվարկված միջոցները առավել կայուն, ժողովրդավար և խոսքի ազատության սահմանափակման չարաշահումների տեսանկյունից առավել անվտանգ կլինեն[55]: Առցանց միջավայրում խոսքի ազատության օրենսդրական լրացուցիչ պատժիչ կարգավորումները կարող են ոչ արդյունավետ լինել մի քանի պատճառներով: Մի կողմից հայալեզու բովանդակությունը, ներառյալ վնասակար խոսքի ստվար ծավալը ձևավորվում են Հայաստանից դուրս գտնվող օգտատերերը[56], ուստի Հայաստանյան օրենսդրական կարգավորումները կարող են պարզապես չգործել նրանց նկատմամբ, և շարունակել գործել միայն նրանց նկատմամբ, ովքեր պատրաստ են հետևել ինքնակարգավորման համակարգերի կանոններին[57]: Մյուս կողմից վնասակար խոսքը ձևավորվում է հիմնականում կամ կարծրատիպերի նախապաշարմունքների և հանրության համապատասխան տրամադրությունների ներքո, կամ ուղղորդված է՝ հետապնդելով որոշակի հստակ օրակարգ: Երկու դեպքում էլ միայն պատժիչ կարգավորումները անբավարար և կայուն լուծում չեն ապահովի, երկու դեպքում էլ անձինք «գտնելու են ձևը ատելության խոսքը տարածելու»[58], նրանք առցանց միջավայրում կարող են հանդես գալ ոչ իրական անունով,

---

53 Պայմանագրի օրինակելի ձև https://ինտերնետհանրություն.հայ/wp-content/uploads/2023/01/contract-itc-registrar-am_orinakeli.pdf

54 Հարցազրույց հիբրիդային վտանգների հարցերով փորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ, 8 օգոստոսի, 2024թ.:

55 Հարցազրույց մեդիափորձագետ Սառա Խոջոյանի հետ, 27 հունիսի, 2024թ.:

56 Հարցազրույց մեդիափորձագետ Սառա Խոջոյանի հետ, 27 հունիսի, 2024թ.: Հարցազրույց հիբրիդային վտանգների հարցերով փորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ, 8 օգոստոսի, 2024թ.:

57 Հարցազրույց հիբրիդային վտանգների հարցերով փորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ, 8 օգոստոսի, 2024թ.:

58 Հարցազրույց մեդիափորձագետ Սառա Խոջոյանի հետ, 27 հունիսի, 2024թ.:

օգտագործել VPN և այլ միջոցներ, որոնք կօգնեն հանդես գալ անանուն։ Ըստ մեդիափորձագետ Սառա Խոջոյանի՝ այն նոր տեղեկատվական իրականության մեջ որում հայտվել ենք մենք բոլորս ամբողջ աշխարհում մեդիագրագիտությունը հանրակրթության անբաժանելի մասը պետք է լինի՝ մյուս դասավանդվող առարկաներին հավասար։

Վերլուծություն և ամփոփում

Խոսքի ազատությունը հիմնարար և զգայուն իրավունք է, որի գերկարգավորումը կարող է վտանգել ժողովրդավարական հասարակության հիմունքները։ Այս իրավունքի կիրարկումը կարող է ունենալ այնպիսի դրսևորումներ, որ այն կվտանգի անձանց այլ իրավունքներ, ինչպիսիք են խտրականությունից, բռնությունից զերծ մնալը, կամ ինքնին՝ խոսքի ազատության իրավունքը։ Միևնույն ժամանակ, խոսքի ազատության համատեքստում գենդերային հավասարության ապահովումը չի կարող տեղի ունենալ առանց հանրային հարաբերություններում երկու իրավունքների իրացման և պաշտպանության բավարար երաշխիքների։ Խոսքի միջոցով գենդերային խտրականության և կարծրատիպերի զարգացումն ու ձևավորումը և՛ հետևանք է նման տրամադրությունների առկայության, և՛ խթան ու միջոց է դրանց խորացման համար։
Ուստի, գենդերային հավասարության ապահովման ուղղված գործողությունները չպետք է սկսեն և ավարտվեն խոսքի ազատության իրավունքի կարգավորումներից։ Ավելին, գենդերային հավասարության ապահովմանն ուղղված գործողությունները պետք է նվազագույն անհրաժեշտ միջամտությունը ունենան խոսքի ազատությանը։
Ապատեղեկատվության ու վնասակար խոսքի դեմ պայքարը չի կարող չափազանց միջամտող լինել, քանի որ խոսքի ազատության առաջնային խնդիրներից է հասարակությունում տարբեր հարցերի շուրջ քննարկումներ ծավալել և թույլ տալ տարբեր, հաճախ, հակադիր կարծիքների գոյությունն ու տարածումը։ Անհրաժեշտ են կարգավորման բալանսավորված համակարգեր, որոնք հնարավորություն կտան պաշտպանել անձանց իրավունքները, սակայն նաև անհարկի չսահմանափակել ու չվտանգել խոսքի ազատությունը։ Այդ կարգավորումները պետք է ձևավորեն համապարփակ մոտեցում, լինեն ճկուն և զարգանան ժամանակին համընթաց՝ ներառելով խոսքի ազատության, խտրականության դեմ պայքարի, լրատվական դաշտի ազատության գործուն օրենսդրական դրույթներ։

Կարգավորումները կարող են և պետք է լինեն տարբեր բնույթի. ներքին էթիկական կարգավորումներ, քաղաքացիաիրավական և վարչաիրավական, ինչպես նաև

քրեաիրավական բնույթի իրավունքի սահմանափակումներ, որոնք կփոխլրացնեն միմյանց և կկիրառվեն կախված խոսքի բնույթից, վնասակարության աստիճանից ու նպատակից։

Այսպես, կարծրատիպային և խտրական խոսքը, կախված բնույթից կարգավորվում է և՛ ներքին կանոնակարգերի, և՛ վարչաիրավական և՛, ընդհուպ քրեաիրավական մեխանիզմներով։ Ատելության խոսքը, ևս կարող է կարգավորվել նաև փափուկ նորմերով, սակայն դրանք հաճախ կարող են գործել ի լրումն քրեաիրավական պատասխանատվություն սահմանող նորմերի։ Ապատեղեկատվության պարագայում, եթե այն չի հասնում խտրականության և ատելության խոսքի, որպես կանոն, քրեաիրավական և վարչաիրավական պատասխանատվության միջոցներով կարգավորելը կարող է ռիսկային լինել։

Եվ բոլոր պարագաներում կարգավորումների կարևորագույն բաղադրիչն է անձանց տեղեկատվական կրթության ու գրագիտության և իրազեկվածության բարձրացումը, որը ապատեղեկատվության և կարծրատիպերի դեմ պայքարի հիմնական միջոցն է։ Եվ այն դեպքում, երբ խոսքի միջամտությունը այլ իրավունքներին հասնում է այն աստիճանի, որ խախտում է այդ իրավունքները՝ գործարկվում են իրավական կարգավորման մեխանիզմները։

Հայաստանում սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով վնասակար կարծրատիպային և խտրական խոսքի կարգավորումների համար անհրաժեշտ կարևոր նախադրյալ է հավասարության իրավունքի և մասնավորապես նշված հիմքերով խտրականությունից զերծ լինելու իրավունքի բավարար կարգավորումները։ Հայաստանը դեռևս չի ընդունել հավասարության իրավունքը կարգավորող համապարփակ օրենսդրություն, որի արդյունքում մի կողմից բացակայում են հավասարության իրավունքի հիմնական հասկացությունների սահմանումները, մյուս կողմից իրավունքի իրացման և պաշտպանության համար անհրաժեշտ պարտավորությունների և պատասխանատվության համակարգերը։

Հատվածային կարգավորումներ ներառում են առանձին իրավական ակտեր։

ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի համար։ Այս դրույթները կարող են զսպող և կանխարգելիչ դեր ունենալ, սակայն, հաշվի առնելով, որ ազատ խոսքի սահմանափակումը քրեաիրավական կարգով կարող է տեղի ունենալ միայն ծայրահեղ դեպքերում դրանք կարող են կիրառելի չլինել դեպքերի մեծ

մասում։ Այս դեպքերի համար առավել կիրառելի կլինեին վարչաիրավական և քաղաքացիաիրավական ներգործության միջոցները, որոնք, սակայն, ՀՀ օրենսդրությամբ խիստ սահմանափակ են։ Քաղաքացիական օրենսդրությունը նման դեպքերում կիրառելի կլինի խոշտանգումների, ինչպես նաև վիրավորանքի և զրպարտության բաղադրիչ ունեցող վնասակար և խտրական խոսքի դեպքում։ Վարչաիրավական ներգործության միջոցները կարող են գործարկվել աշխատանքային իրավունքների խախտման բաղադրիչ ունեցող, գովազդի միջոցով, ինչպես նաև տեսալսողական լրատվամիջոցների կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով արգելված խտրական բովանդակության տարածման դեպքում։

Համապարփակ և համընդհանուր խտրական և վնասակար խտրական խոսքի կարգավորումներ քաղաքացիաիրավական և վարչաիրավական օրենսդրությունը չի նախատեսում։

Միևնույն ժամանակ, ինչպես Քրեական օրենսգիրքն, այնպես էլ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքը, «Գովազդի մասին» օրենքը նշում են պաշտպանված մի շարք հիմքեր, ներառյալ սեռը, սակայն չեն մատնանշում սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը։ Քրեական օրենսգրքի դեպքում այս հիմքերը կարելի է դիտարկել անձնական այլ հանգամանքների, իսկ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի և «Գովազդի մասին» օրենքի դեպքում այլ հիմքերի ներքո, սակայն, կարևոր է հաշվի առնել, որ գործող կարծրատիպերի առկայության պայմաններում այն հանգամանքը, որ այդ հիմքերը առանձին կերպով մատնանշված չեն, բացասաբար է ազդում այս խմբերի պաշտպանության վրա։

Առցանց միջավայրում խոսքի ազատության, ներառյալ մեդիաազատության կարգավորումներին զգույշ և հեռատեսորեն պետք է մոտենալ։ Առցանց միջավայրում խոսքի ազատությունը պետք է կարգավորվի անցանց միջավայրի կարգավորումներին համապատասխան։ Այս դեպքում զգալիորեն մեծ նշանակություն ունեն մեդիագրագիտության, վտանգավոր բովանդակության հանդեպ հանրային դիմադրողականության զարգացման մեխանիզմները, ինչպես նաև ինքնակարգավորման մեխանիզմների լիարժեք գործարկումը։

Առաջարկություններ

Օրենսդրական բնույթի առաջարկություններ

1. ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածով ամրագրել խտրականությունից պաշտպանված բոլոր հիմքերը, նախատեսելով ոչ սպառիչ ցանկ, ինչպես նաև ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:
2. Ընդունել հավասարության, խտրականության արգելքի վերաբերյալ համապարփակ օրենսդրական կարգավորումներ, ներառյալ.
   1) «Հավասարության մասին» առանձին օրենք, որը կսահմանի հավասարության իրավունքի շրջանակի հիմնական հասկացությունները, ի թիվս այլի՝ խտրականությունը, խտրականության տեսակները, ատելության խոսքը:
   2) Որպես խտրականության պաշտպանված հատկանիշ կամրագրի սեռը, սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը:
   3) Կսահմանի վարչաիրավական և քաղաքացիաիրավական բնույթի պատասխանատվության համակարգ խտրական, կարծրատիպային հանրային խոսքի համար:
3. Քրեական օրենսգրքի 329-րդ և 330-րդ հոդվածներով ամրագրել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, որպես պաշտպանված հիմք:
4. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով, 22-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրել «սեռական կողմնորոշումը» և «գենդերային ինքնությունը» որպես պաշտպանված հիմքեր:
5. «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանվող արգելքի հիմքերի ցանկը ձևակերպել ոչ սպառիչ եղանակով, ինչպես նաև ցանկին լրացնել «սեռական կողմնորոշումը» և «գենդերային ինքնությունը»:
6. Քննարկել «Զանգվածային լրատվության միջոցների» մասին ՀՀ օրենքով ԶԼՄ -ների կողմից խտրականությունից պաշտպանված որևէ հիմքով խտրականություն պարունակող տեղեկատվության տարածման արգելքի սահմանումը: Իսկ նման արգելքի խախտման համար որպես դիմումների հիման վրա բողոքների քննող և պատասխանատվության ենթարկող մարմին սահմանել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:
7. Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարություններում թիրախավորված գործողություններ նախատեսել սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ապատեղեկատվության դեմ պայքարի և քաղաքական և այլ նպատակներով այս հիմքերով խտրականության տարածման վտանգները նվազեցնելու ուղղությամբ:

Գործնական բնույթի առաջարկություններ

8. Հանրային հեռարձակողների խորհուրդին՝ Ազգային ժողով ներկայացվող Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունում ներկայացնել տեղեկություն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթների կատարման վերաբերյալ:
9. Հանրակրթական ուսումնական ծրագրերում ներառել տեղեկատվական, մեդիայի և համացանցային բովանդակության գրագիտության զարգացման վերաբերյալ առարկա:
10. Կազմակերպել տեղեկատվական արշավներ տեսալսողական լրատվամիջոցներում և հանրային տարածքում գենդերային ապատեղեկատվության, խտրական և կարծրատիպային խոսքի կիրառման բացասական հետևանքների վերաբերյալ լրատվական ծառայություններ մատուցողների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:
11. Պարբերաբար և հետևողականորեն իրականացնել լրատվամիջոցների աշխատակիցների և լրագրողների համար խորքային վերապատրաստումներ սեռի, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելքի և վտանգների վերաբերյալ: Վերապատրաստում իրականացնողները պետք է լինեն կազմակերպություններ և փորձագետներ, ովքեր ունեն տվյալ ոլորտում բավարար գիտելիք և փորձ:
12. Ձգտել ապահովել լրատվամիջոցների ղեկավար կազմում տղամարդկանց հետ հավասար կանանց առկայությունը: Ապահովել անխտրական միջավայր կանանց և ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների և խտրականության վտանգի ներքո գտնվող այլ անձանց համար լրատվամիջոցների ղեկավար պաշտոններում նշանակման և առաջխաղացման համար:
13. Բարձրացնել ՁԼՄ դիտորդ մարմնի տեսանելիությունը, իրականացնելով մարմնի վերաբերյալ տեղեկատվության բարձրացման արշավ: Մարմնին դիմելու համակարգը դարձնել մատչելի տարբեր հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաների համար:
14. Իրականացնել հայալեզու հանրային առցանց տիրույթում սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության հիմքով վնասակար ապատեղեկատվության, կարծրատիպեր վերահաստատող և ձևավորող, խտրական և ատելության խոսքի տարածվածության գնահատման հետազոտություն: